

ՆԱԻՐԱ ԱՎԱԳՅԱՆ

ՆԱԻՐԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԵՐԿԼԵԶՎԱԿԻՐ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՈՍՔԻՆ ԲՆՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Երկլեզվակրությունը՝ երկու լեզվի տիրապետումը, մարդուն տալիս է շատ առավելություններ, սակայն այն իր հետ բերում է նաև որոշ խնդիրներ: Հողվածում քննարկվում է երկլեզվակիր երեխաների խոսքի զարգացման որոշ առանձնահատկություններ, երկլեզվակրությունից բխող խնդիրներ և դրանց հաղթահարման մոտեցումներ:

Յուրաքանչյուր ժողովրդի էթնիկական պատմության մեջ զգալի տեղ ունեն էթնլեզվական գործընթացները: Հայերը քաղաքական, պատմաաշխարհագրական և այլ տարբեր հանգամանքների բերումով իրենց վրա միշտ էլ կրել են երկլեզվակրության տարածմանը նպաստող գործոնների ազդեցությունը: Դարերի ընթացքում հայերը տարբեր բնույթի շփումներ են ունեցել ռուսների, վրացիների, արաբների, հույների, ասորիների, թուրքերի, պարսիկների և այլ ազգերի հետ:

Հայ ժողովրդի էթնիկական պատմության մեջ նոր երևույթ էր խորհրդային շրջանի հայ-ռուսերեն երկլեզվակրությունը: Դրան նպաստող գործոններից էին հանրակրթական դպրոցներում ռուսաց լեզվի նկատմամբ հատուկ վերաբերմունքը, ինչպես նաև հայ գինակոչիկների՝ խորհրդային բանակում գինվորական ծառայությունն անցկացնելու փաստը:

Խոսելով հայ-ռուսերեն երկլեզվակրության տարածման աղբյուրների մասին՝ հարկ է նշել, որ ներկայումս երկլեզվակրության զարգացման բարձր տեմպերը Հայաստանում որոշ չափով պայմանավորված են հանրապետություն ներգաղթածների մեծ թվով: Ռուսաստանից, Վրաստանից և առավելապես Ադրբեջանից սեփական էթնիկական միջավայր վերադարձած վերաբնակիչների լեզվական վարքում ռուսաց լեզվի ազդեցությունը զգալի է ինչպես ընտանեկան միջավայրում, այնպես էլ արտադրական, հասարակական-քաղաքական և գիտամշակութային ոլորտներում, առավելապես տեղեկատվության փոխանակման դաշտում:

Երկլեզվակրությունը և նրա առավելությունները

Երեխաների մոտ տարբերակում են երկլեզվակրության երկու հիմնական ձև՝ *համաժամանակյա* և *տարժամանակյա*: *Համաժամանակյա* երկլեզվակրությունը երկու լեզուների գրեթե հավասարաչափ տիրապետումն է մինչև 3 տարեկան հասակը: Դա մանկական երկլեզվակրության առաջին փուլն է: Այդ շրջանում ի հայտ են գալիս այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խոսքի ուշացումը և երկու լեզուների միախառնումը: Սակայն ժամանակի ընթացքում երեխան սկսում է տարբերել լեզուները, և այդ երևույթներն արագ անհետանում են: Այդ գործընթացին նպաստում են նաև արտաքին գործոնները: Քանի որ առաջին փուլում երեխայի խոսքի ձևավորումը հիմնականում կատարվում է ընտանիքում. շատ կարևոր է, որ ծնողները կամ ընտանիքի մյուս ավագ անդամներն իրենց խոսքում չխառնեն երկու լեզուները: *Տարժամանակյա* երկլեզվակրության դեպքում երեխայի երկրորդ լեզվի իմացությունը ծեռք է բերվում մի քիչ ավելի ուշ՝ խարսխվելով մասնավորապես հիմնական լեզվի իմացության վրա:

Երկլեզվակրությունն ունի շատ առավելություններ: Երկլեզվակիր երեխաներն ավելի հեշտ են ընկալում նույնիսկ երրորդ, չորրորդ լեզուները, իսկ այդ չորս լեզուների ընկալումը կհաջողվի միայն երեխայի հետ ինտենսիվ աշխատելու դեպքում: Ապացուցված է, որ երկլեզվակիր երեխաները ավելի ստեղծարար են և ավելի հեշտ են որոշումներ կայացնում և կենտրոնանում:

Լեզվամիջոցառության զարգացում՝ պայմանավորված նաև մարդու աշխարհայացքով: Քանի որ լեզուն մշակույթի ամենակարևոր բաղադրիչներից է, կարող ենք այնդել, որ երկլեզվակիրները ներկայացնում են մեկից ավելի մշակույթներ, ինչպես նաև մենթալ դաշտեր, որն էլ նպաստում է ազատ, քննա-

դատական մտածողության զարգացմանը:

Երկլեզվակրության խնդիրները

Որքան էլ ջանում ենք լինել ուշադիր, փորձում ենք անել առավելագույնը աշխատելու ընթացքում, միևնույնն է, լինում են որոշ թերություններ, բացթողումներ, որոնք ընտանիքներում ծնողների խոսքում տեղ գտած լեզվական սխալները բացասաբար են ազդում երկրորդ կամ երրորդ լեզվի լիարժեք յուրացման վրա: Ամենաընդունված սխալներից մեկն այն թյուր կարծիքն է, թե երեխաները ինքնաբերաբար կդառնան երկլեզվակիր, քանի որ ընտանիքը երկլեզվակիր է: Երեխան սպունգ չէ, որ առանց ջանք ու եռանդի կլանի ամեն ինչ: Հարկավոր է լուրջ աշխատանք և մեծ համբերություն, որ նա երկրորդ կամ երրորդ լեզուն յուրացնի արտադրողական մակարդակում: Նա կարող է հասկանալ ամեն ինչ, բայց չկարողանա արտահայտվել:

Երկլեզվակիր երեխաներ ունեցող ծնողների մոտ կա ևս մի շատ տարածված վրիպում: Նրանք ենթադրում են, որ հեռուտացուցցով երկրորդ լեզուն պարբերաբար լսելով՝ կարելի է տիրապիտել լեզվին: Երեխան, հեռուտացուցցի էկրանի առջև նստելով, նույնպես յուրացնում է որոշակի օտարալեզու լեզվակաղապարներ: Սակայն միշտ չէ, որ դրանք նա կիրառում է իր օտարալեզու ակտիվ խոսքում:

Կարևոր բացթողում է այն, երբ ծնողները փորձում են արհեստական կամ ուսումնական պայմաններում ձևավորել երեխաների մոտ համադասական երկլեզվություն: Նրանք ճիշտ պատկերացումներ չունեն գերակա (դոմինանտ) կամ ստորադաս երկլեզվության մասին: Ավելին, նրանք դեռևս վաղ տարիքում ենթագիտակցորեն փորձում են հաղթահարել երեխաների մոտ քերականական, բառային, հնչյունական, մշակութային բնույթի փոխներթափանցման դրսևորումները: Սակայն օտար լեզվի ուսուցման ցանկացած փուլում դա նորմալ երևույթ է:

Կա նաև մտավախություն, որ երեխաները երկլեզվակրության հետևանքով ուշ կսկսեն խոսել, և դպրոցում առաջադիմությունը կլինի ավելի ցածր: Այդ հիմնախնդիրը պետք է քննության առնել կոնկրետ իրադրություններում՝ հաշվի առնելով երեխաների և երկ-

լեզու լեզվական միջավայրի հոգեբանական, սոցիալական առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկլեզվակիր երեխաները նոր լեզուներ յուրացնում են նույն արագությամբ, ինչպես մեկ լեզվի տիրապետող երեխաները: Լեզուների փոխներթափանցումը միշտ չէ, որ գերակա երկլեզվության պատճառ է դառնում: Երեխաներին բնորոշ է օտարալեզու բառեր օգտագործելը ոչ միայն օտար, այլ նաև մայրենի լեզվով հաղորդակցվելիս:

Երկլեզվակրության բնորոշ խոսքային սխալները և նրանց ուղղելու մոտեցումները

Երկլեզվակիր երեխաների լեզվի ուսուցման, ինչպես և լեզվում առկա սխալները շտկելու խնդիրները մշտապես եղել են մասնագետների ուշադրության կենտրոնում: Ժամանակի ընթացքում բազմաթիվ մոտեցումներ և մեթոդներ են մշակվել: Ըստ այդմ, խնդիր է դրվում օտար լեզուներ ուսումնասիրել դեռևս ընտանիքում, ընդ որում՝ նախապես մշակված պլանով: Կարևոր է այդ առումով համապատասխան լեզվական միջավայրի դերը: Եթե ծնողները հաղորդակցվում են տանը երկու և ավելի լեզուներով, ապա երեխաները հիմնականում յուրացնում են երկրորդ լեզուն առաջին լեզվի մակարդակում:

Երբեք շատ ուշ կամ շատ շուտ չի լինում երեխայի համար երկրորդ լեզուն սովորելը: Համաձայն մասնագետների՝ երեխային երկրորդ լեզուն սովորեցնելու լավագույն ժամանակը մինչև երեք տարեկանն է: Դա այն տարիքն է, երբ երեխան լսում և սովորում է իր առաջին լեզուն: Այդ տարիքում նա շատ արագ է վերարտադրում իր լսածը և, իհարկե, մտապահում: Դեռևս մինչև խոսել սկսելը երեխայի մեջ ձևավորվում է համապատասխան լեզվական պատկերը: Հետևաբար երեխայի հետ պետք է խոսել հենց ծնված օրվանից (իսկ որոշ մասնագետների կարծիքով՝ նույնիսկ դեռ չծնված ժամանակ)՝ սաղմնային վիճակում): Եվ պետք է խոսել հնարավորինս շատ: Նշանակություն չունի, թե երեխան ինչ արագությամբ է յուրացնում հնչող խոսքը: Կարևոր խնդիր է նաև այն, թե երեխան ինչպես է տարբերակում օտարալեզու խոսքը, նրա շեշտը, հնչերանգը և այլն: Ահա թե ինչու երեխան կյանքի առաջին իսկ ամիսներից պետք է լսի օտար լեզվով հնչող երգեր: Հոգեբանները նախապատվությունը

տալիս են կենդանի ձայնին: Էական չէ՝ երգողը երաժշտական լսողություն ունի, թե ոչ: Չնայած փոքրիկը դեռ չի խոսում, նա հայացքով հետևում է երգողի շուրթերի շարժմանը և արձագանքում է ձայնին իր միմիկայով, շարժումներով և այլն:

Մինչև հասունության տարիքը երեխայի ուղեղը ունակ է զուգահեռաբար մի քանի լեզու յուրացնելու՝ հաշվի առնելով այն փաստը, որ հասունության տարիքից սկսած՝ երկրորդ լեզվով տեղեկատվություն կուտակվում է ուղեղի համապատասխան կենտրոնում: Հետևաբար երկրորդ լեզուն ընկալելու համար երեխան առաջնային լեզվի հետ զուգահեռներ է տանում կամ դիմում է թարգմանության:

Լեզվի յուրացման մեկ այլ արդյունավետ մեթոդ է ընթերցանությունը, ընդ որում՝ երկու լեզվով: Ընթերցանությունն արդյունավետ է, երբ ավարտվում է երկխոսությամբ: Կարելի է քննարկել հերոսներին, նկարագրել նրանց, զուշակել, թե ինչ կլինի հետո, ինչպես կավարտվի պատմությունը: Երկխոսությունը ևս պետք է իրականացվի թե՛ գերակա, թե՛ երկրորդ լեզվով: Ընթերցանությունը շատ կարևոր է, որովհետև երեխան լսում է գեղեցիկ գրական լեզու, ձևավորում է միտքը խոսքի կանոնների համաձայն, սովորում է նոր բառեր երկու լեզուներից և դրանց ճիշտ արտաբերումն ու կառուցվածքը: Գրքերին և ընթերցանությանը զուգահեռ պետք է անցում կատարել մանկապատանեկան ֆիլմերին և հետաքրքիր խաղերին՝ կրկին երկու լեզուներով: Դա նույնպես նպաստում է բառապաշարի զարգացմանը և ճիշտ խոսք կառուցելուն: Երեխաների համար շատ մատչելի են պարզ, փոքրիկ բանաստեղծությունները, որոնք նրանք հեշտությամբ են մտապահում երկու լեզուներով էլ: Գաղտնիք չէ, որ երեխաների մեծ մասը հանգիստ նստել չի կարողանում՝ լինի բանաստեղծություն արտասանելիս, պատմություն պատմելիս, թե երգելիս: Երեխային սաստել չի կարելի: Երեխայի շարժումները դրական ազդեցություն են ունենում նրա խոսքի ձևավորման վրա: Պատճառն այն է, որ մարդկանց գլխուղեղում խոսքի համար պատասխանատու հատվածը շատ մոտ է շարժումների համար պատասխանատու հատվածին: Ուստի բառապաշարը հարստացնելու լավագույն տարբերակ են ուրախ, ռիթմիկ երգերը, որոնք երգելիս պահանջվում

են շարժումներ: Բերենք օրինակ՝
One little two little three little Indians,
Four little five little six little Indians,
Seven little eight little nine little Indian
Ten little Indian boys.

Одна голова,
 Ухо раз и ухо **два**,
Три у клевера листа,
Четыре лапы у кота
 Вот часы пробили **пять**.
 Что еще бы посчитать?

Մեկ, երկու, երեք՝ ճմերուկը բերեք,
Չորս, հինգ, վեց՝ ընկավ կոտրվեց,
Յոթ, ութ, ինը՝ ի՞նչ է նրա գինը,
Տասը՝ ահա վնասը:

Բնական է, որ լեզուների յուրացման ընթացքում երկլեզվակիր երեխաների մոտ կծագեն հնչարտաբերման, քերականական, շարահյուսական կառուցների մի շարք խնդիրներ: Ուսումնասիրելով հայկական միջավայրում ապրող ռուսալեզու երկլեզվակիր երեխաների խոսքը՝ կարելի է նկատել, որ հազվադեպ երևույթ է երկու լեզուների հավասարաչափ տիրապետումը: Լեզուներից մեկը գրեթե միշտ գերակա է՝ առաջնային: Առաջնային է հիմնականում այն լեզուն, որով խոսում են ընտանիքում: Երկրորդ լեզվի յուրացումը մասնավորապես տեղի է ունենում առաջնային լեզվի հիմքի վրա, որի ընթացքում ի հայտ են գալիս թարգմանական սխալներ լեզվի տարբեր մակարդակներում՝ բառային, քերականական և այլն: Դիտարկենք մի քանի օրինակ.

Քույրիկս ինձ չի փալիս քնեմ (не даёт спать) ----- չի թողնում քնեմ

Իմ մոդը նոր խաղալիք կա (у меня новая игрушка) ----- ես նոր խաղալիք ունեմ

Ինձ ցուրտ է (мне холодно) ----- ես մրում եմ

Ստորև բերված օրինակներում սխալ են թարգմանված նախդիրները.

փաքսիի վրա եկանք (приехали на такси)
քույրիկս դուրս եկավ փողոցի վրա (вышла на улицу)

պապան աշխատանքի վրա է (папа на работе)

նվագում եմ ջութակի վրա (играю на скрипке)

ուշացանք դասի վրա (опоздали на урок)

Հետևյալ օրինակներում ցույց են տրված սխալներ միաժամանակ բառային և քերականական մակարդակներում.

Ես չեմ մրսում, ես պալպրոյի մեջ եմ (Я в пальто)

Տյոպյան ակնոցների մեջ է (темя в очках)

Դեղուլին գնում են այս ակնոցները (дедушке идет эти очки)

Սխալների շատ հաճախ կարելի է հանդիպել դարձվածքային արտահայտությունների թարգմանություններում.

– Որտեղից: – Ուղտից: (Откуда? – От верблюда.)

– Իմ բերանը կողպեքի վրա է: (У меня рот на замке.)

Բերենք շարահյուսական սխալների մի քանի օրինակ: Ինչպես գիտենք, հայերենի շարահյուսայինը առավել բնորոշ բանաձևն է՝ ենթակա+ուղիղ *խնդիր+ստորոգյալ*: Ռուսերենին ավելի բնորոշ է *ենթակա+ստորոգյալ+ուղիղ խնդիր* կառուցը:

– Ես լսում եմ երաժշտություն (слушаю музыку) – Երաժշտություն եմ լսում:

–Մաման պատրաստում է ճաշ: (готовит обед) –Ճաշ է պատրաստում:

Ինչպես հաղթահարել այդպիսի սխալները: Ամենակարևոր պայմանը հանգստություն պահպանելն է: Պետք է լինել համբերատար և ոչ մի դեպքում խիստ բացասական մոտեցում չցուցաբերել: Երկլեզվակիր երեխաների մեծամասնությունը քերականական կանոնները յուրացնում է ինքնաբերաբար՝ խոսել սովորելու ընթացքում: Այսպիսով՝ գերակա լեզվի ներգործությունը երկրորդ լեզվի վրա անխուսափելի է, որի պատճառով էլ առաջանում են վերոհիշյալ սխալները: Խոսելիս խորհուրդ չի տրվում երեխային անդադար ընդհատել՝ սխալը շտկելու համար: Երեխան հնարավոր է հիասթափվի և հրաժարվի սովորել: Ուշադրությունը պետք է կենտրոնացնել միայն կոպիտ սխալների վրա: Հակառակ դեպքում երեխան կարող է լարվել, հուսահատվել, որի հետևանքով կարող է ավարտին չհասցնել միտքը: Որպեսզի խուսափենք նման իրավիճակներից, առաջարկենք սխալ ձևակերպված միտքը կամ բառը աննկատ շտկելու մի քանի մոտեցումներ.

1. Երեխայի խոսելու ընթացքում կարելի է գլխով հավանության նշան անել, ամեն ճիշտ խոսքի ժամանակ: Իսկ խոսքի սխալ ձևա-

կերպում լսելուց հետո անհրաժեշտ է սահուն երկխոսության մեջ մտնել՝ կրկնելով նույն նախադասությունը արդեն ճիշտ տարբերակով: Եվ երեխան կսի ճիշտ հնչարտաբերում կամ շարահյուսություն առանց ավելորդ լարման:

2. Սխալն ուղղելու պահին շատ կարևոր է դեմքի ճիշտ արտահայտությունը: Երեխաները շատ ուշադիր են խոսակցի ժեստերի, դիմախաղի նկատմամբ: Նրանք շատ արագ են գնահատում ոչ խոսքային հաղորդակցման միջոցները՝ դեմքի հանգիստ, զայրացած, հիասթափված լինելը և այլն:

3. Կարելի է մտապահել երեխայի սխալները և անդրադառնալ դրանց ավելի ուշ՝ ասենք զբոսնելիս կամ խաղալիս: Նրբանկատորեն հիշեցրեք սխալ ձևակերպումները և բացատրեք ճիշտ ձևերը: Անդրադառնալով սխալներին՝ հարկավոր է շեշտը դնել երկու լեզուների քերականական տարբերությունների վրա և համադրել նմանությունները: Ձեռք բերված քերականական գիտելիքը ամրապնդելու համար կարելի է կիրառել ձեռքի տակ եղած ցանկացած միջոց՝ հատուկ մշակված համակարգչային ծրագրերից ընդհուպ մինչև լեզվուսույցներ:

4. Երկլեզվակիր երեխաների մոտ քիչ չեն նաև ուղղագրական սխալները: Այստեղ նույնպես պահանջվում է նրբանկատություն և համբերատարություն: Մաքրագիր տետրում կարմիր գույնով նշումներ անելով մեծ արդյունքի չենք հասնի: Հարկավոր է սևագրության տետր վերցնել և աշխատել սխալների վրա՝ բացատրել բառակազմությունը, շեշտի տարբերությունները և կատարել արտագրություններ: Սխալների ուղղման ընթացքը պետք է լինի թեթև և վերածվի հետաքրքիր խաղի:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ երեխայի խոսքի ձևավորման գործընթացում շատ կարևոր է ընտանեկան և սոցիալական միջավայրի դերը:

Երկլեզվակիր երեխաների ուսուցման գործընթացը չպետք է լինի ծանր, դաժան: Այն պահանջում է հստակ պլան, մշակված կառուցվածք, ամենօրյա նպատակաուղղված աշխատանք բանավոր և գրավոր խոսքի զարգացման վրա: Եվ ամենակարևորը՝ մեծ համբերություն:

naraavakyan@ysu.am
nnersesian@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bialystok, E. (2001) *Bilingualism in Development: Language, Literacy, and Cognition*. Cambridge, UK: Cambridge University Press.
2. Bosemark, Ch. (2003) *Raising Bilingual Children*. Art Galleries & Dealers in San Francisco, CA.
3. De Houwer, A. (1998) *Bilingualism and Migration*. New York: Mouton de Gruyter.
4. Eisenberg, A., Murkoff, H., & Hathaway, S. E. (1989) *What to Expect the First Year*. New York: Workman.

SOME APPROACHES TO OVERCOMING PROBLEMS IN THE SPEECH OF BILINGUAL CHILDREN

N. AVAGYAN, N. NERSISYAN

The knowledge of two or more languages truly gives children many advantages in life. Bilingual children have the advantage of knowing two cultures, of being able to communicate with a wider variety of people. There are two major patterns in bilingual language acquisition: simultaneous bilingualism and sequential bilingualism. In *simultaneous* bilingualism, the child acquires two languages at the same time before the age of three. Children may mix words or parts of words from both languages at this stage. *Sequential* bilingualism may also occur before the child is three years old, but the child can draw on the knowledge and experience of the first or dominant language (the language of the country they live in, or the one spoken in the family) while acquiring the second language. The article discusses some approaches to overcoming problems in the speech of bilingual children.

ПОДХОДЫ ПРЕОДОЛЕНИЯ ПРОБЛЕМ В РЕЧИ ДВУЯЗЫЧНЫХ ДЕТЕЙ

Н. АВАГЯН, Н. НЕРСИСЯН

Знание двух языков даёт детям много преимуществ в жизни. Есть два основных вида двуязычия – синхронное и приобретённое. При синхронном двуязычии ребёнок до трёх лет параллельно, одновременно владеет двумя языками. В этой стадии возможно смешивание слов и грамматических конструкций двух языков, но это временное явление. Приобретённое двуязычие – это изучение второго языка на основе первого (родного) языка. В статье обсуждаются некоторые подходы преодоления проблем в речи двуязычных детей.